ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ., 12,
հեռ՝ (0264) 2-34-23, էլ. փոստ՝ gavari.hamaynqapetaran@gmail.com

N Մ-3863
04.10.2024թ.

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու մասին

Գավառի համայնքապետարանի և «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ–ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 27.08.2024թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/29 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Ընկերության կողմից չի ներկայացվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող համայնքի մասնաբաժնի ֆինանասական միջոցների առկայության N 1 համաձայնագիրը, որը Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է 11.09.2024 թվականին և որի ներկայացման ժամկետ է սահմանված եղել տասնհինգ աշխատանքային օրը՝ սույն թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ «եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ՝

- հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով,

- յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար օրենքի նույն մասով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկն սկսվում է նախորդ համաձայնագրի կատարման ավարտից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը սահմանված ժամկետում Գավառի համայնքապետարան չի ներկայացրել պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագիր N1-ը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած

հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը /ծանուցումը/ հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Համայնքի ղեկավար՝ **Գուրգեն Մարտիրոսյան**

Կատ. Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ՝
Մ. Մովսիսյան